ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

# ԱԿՕՍ

ԱՐՏՕՆԱՏԷՐ. AGOS YAYINCILIK BASIM HİZMETLERİ SAN. ve TİC LTD. ŞTİ. անունով՝ Րաֆիլ Տինք, ՀԻՄՆԱԴԻՐ՝ Հրանդ Տինք, ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ՎԱՐԻՉ՝ Էթիէն Մահճուպեան, ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԸՆԴՀ. ԽՄԲԱԳԻՐ՝ Արիս Նալճը, ՀԱՍՑԷ՝ Հալասքեարկազի Պողոտայ, Սէպաթ Ափթ. 192 յարկաբաժին 1 Օսմանպէյ, Իսթանպուլ: Հեռ. 0 212 296 23 64 - 0212 231 56 94 Ֆաքս. 0212 247 55 19 ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ՝ Սթար Հրատարակչութիւն Ա. Ընկ.: ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ՝ Թուրքիա՝ 6 ամսուան 60 ՆԹԼ. Տարեկան 120 ՆԹԼ. Եւրոպա 6 ամսուան 75 Եւրօ, Տարեկան 150 Եւրօ, Ամերիկա եւ Գանատա 6 ամսուան 100 $, Տարեկան 200 $ Աւստրալիա՝ 6 ամսուան 110 $, Տարեկան 220 $: Ինթերնէթ՝ www.agos.com.tr

# «ԿՈՐ»

**ՄԱՀԻՐ ԷՕԶՔԱՆ**



Մանկութեանս երբ մայրս գործ մը կը պահանջէր ինձմէ, կիսատ կը թողէի, կը փախչէի: Գիւղի մէջ ո՞ւր կրնաս փախչիլ: Ընկերներու քով, անշուշտ: Մինչ իմ տարիքի տղաքն ալ շատ անգամ գործով մը զբաղած կ'ըլլային: Կա՛մ թէյի արտին մէջ մեծերուն կ'օգնէին, կա՛մ աշխատողներուն ջուր եւ ճաշ կը տանէին, կա՛մ ալ էշերուն կը հսկէին: Երբ մայրս տեսնէր որ գործէն խոյս տուած, ընկերներուս քովը գացած եմ՝ կ'առարկէր. «Օրդի դուն ինչպէ՞ս տաղայ էս, քու բոնէտ էնէչես խաքի բոն կենէս» (Որդիս դուն ինչպէ՞ս տղայ ես, քու գործդ չես ըներ, ուրիշին գործը կ'ընես): Ես կը դիմէի ինքնապաշտպանութեան «ամա եէ մա, անտաղ է բոնէ հետրա կէնիկ» (բայց մամա, հոն գործը միասին կ'ընենք):

Այս պատճառաւ ես միշտ կարեւորութիւն տուած եմ համագործակցութեան:

Համշէնցիները համախմբուելով գործ մը կատարելը «կոր» կ'անուանեն: Զանազան գործերու համար կոր կ'ըլլայ: «Ճամբու կոր»ը գիւղին ճամբայ բանալու համար է: Բոլոր տուներէն ձեռքը բահ-բրիչ բռնողները առաւօտ կանուխ կը մէկտեղուին, կը փորեն, կը լղկեն, քար կը շարեն եւ կը կառուցեն գիւղին ճամբան: «Ջուրի կոր»ը տուներուն ջուր բերելու համար է: Նախ պէտք է առատ ջուր ունեցող ակ մը գտնել. ակը մեծ ըլլալու է, որպէսզի բաւէ բոլոր տուներուն: Ակին քով փոքր ջրամբար մը կը կառուցուի եւ միաժամանակ կը սկսի առու փորելու գործը: Այսպէսով կը գոյանայ ջրանցքը եւ ջուրը կը հասնի տուներուն: Իսկ «Տունի կոր»ը կ'ընեն այն չքաւոր գիւղացիներուն, որոնք անճար են տուն կառուցելու, կամ ալ հրդեհով, հեղեղով վնասուած է իրենց տունը: Բոլոր գիւղացիները ձեւով մը կը մասնակցին աշխատութեան, ոմանք փայտ, ոմանք քար, ոմանք ալ աւազ կը կրեն, ոմանք ալ ճաշ կ'եփեն աշխատողներուն: «Կոր»երուն ամենէն աղուոր կողմը այն է, որ թէ՛ կ'աշխատիս եւ թէ կը զուարճանաս: Կորերուն երգեր ու մանիներ կ'երգուին, հէքեաթներ կը պատմուին եւ գործը կը վերածուի ընկերային ապրումի:

Կորի այս յատկութիւնները ամենայստակ կը յայտնուին «Բաժքի կոր»ին: «Բաժքի կոր»ը եգիպտացորենին կեղեւներէն զատելու համար կը կատարուի: Բաժքուշ կամ Բաժքել, կը նշանակէ բաժանել-զատել: Եգիպտացորենի հատիկները տերեւապատ կեղեւէն զատելու գործողութիւնն է: «Բաժքի կոր»ը, ըստ տարբերութիւն միւս կորերէն, երիտասարդներուն աղջիկ-տղայ մէկտեղուելով երգած, իրար ճանչցած միջավայրի մը կը վերածուի: Ցերեկին կը սկսի աշխատանքը եւ կը տեւէ մինչեւ ուշ գիշեր: Գործի հետ զուգահեռ «Պաղինձ» կոչուած հսկայ կաթսան խարոյկի վրայ կը դնեն եւ կեղուըւած եգիպտացորեններէն «ջղինդի» ըսուած տհասները կ'եփեն կաթսային մէջ: Մարդիկ մէկ կողմէ կ'աշխատին, մէկ կողմէ ալ եփած ջղինդին կ'ուտեն, երգեր ու մանիներ կ'երգեն: Սխալած չենք ըլլար, եթէ ըսենք թէ համշէնական մանիներուն մեծամասնութիւնը արտադրուած են բաժքի կորերուն եւ բերնէ բերան տարածուած:

Կորի ընթացքին սէրերը մանիի կը վերածուին եւ ամէն մէկ մանին կը գտնէ իր հասցէն:

**Սիյողն էլաւ էրկենցաւ,**
**Ճերմակ արճեց հետնիվէ,**
**Եսա աման էրկէնայ,**
**Իմ սէվտային հետն ի վէ:**
**Այսինքն՝**

*(Պատատուկն ելաւ երկնցաւ,*
*Սպիտակ կաղամախի հետն ի վեր,*
*Ես ալ այդպէս երկարիմ,*
*Իմ սիրածին հետն ի վեր):*

Այս մանին ալ գտած է իր հասցէն: Պատասխանը շուտով կը հասնի անշուշտ, որ յապաղած սէր մըն է.-

**Չաղես գուգար գենացեր,**
**Ջուն էյէւ նոր գենացէր,**
**Երկու քէօք կաղնեց ամա,**
**Ջիափոն է մնացէր:**

*(Անձրեւ կու գար, գացիր,*
*Ջիւն եկաւ ո՞ւր գացիր,*
*Երկու արմատ կաղինի համար,*
*Ծուկան մնացիր):*

Տղան կը զգայ, որ ուշ մնացած է, բայց սէրը չի կաշկանդուիր: Կը պնդէ.-

**Երկու կացին բերճու մէ,**
**Խեչէցնողում արճի մէ,**
**Այս իկուն իսա գաղազ,**
**Փաղցենողում աղջիկ մէ:**

*(Երկու կացին մէկ տապար,*
*Պիտի տապալեմ ծառ մը,*
*Այս իրիկուն այս գիւղէն,*
*Պիտի փախցնեմ աղջիկ մը):*

Չ'ուշանար աղջկան պատասխանը, հետզհետէ խստանալով: Կ'ուզէ հասկցնել, որ ալ գործը գործէն անցած, ինք ալ նշանուած է, բայց կը շարունակէ գրգռել: Թերեւս յոյսի իր վերջին փշրանքը կը ծածկէ այս յարձակողական ոճին մէջ: Թէ՛ յոյսերը եւ թէ ճարահատութիւնը:

**Իմ դեռանէ ձեկուեցաւ,**
**Էրկու եէէք հատիկ ֆիշաղ,**
**Դուն զադ իմացեր օչ դա,**
**Հայ արտալէցի էշշաղ:**

*(Իմ դրանս արձակուեցաւ,*
*Երկու երեք հատ փամփուշտ*
*Դուն բնաւ չիմացա՞ր,*
*Ով արտալէցի էշ):*

Այս խիստ պատասխանը կը խստացնէ նաեւ տղան եւ այս անգամ թիրախ կը դարձնէ աղջկան նշանածը:

**Մէկ լաուցմէ բեճկեցի,**
**Բաճքէ ույնման էրկէնէր,**
**Նէշանլուիդ ճոնչեցի,**
**Քինթէ ույնման էրկէնէր:**

*(Եգիպտացորեն մը կեղուեցի,*
*Կոթը իրմէ երկար էր,*
*Նշանածդ ճանչցայ,*
*Քիթը իրմէ երկար էր):*

Երբ մէկ կողմէ այսպէս լեզուի կ'ելլեն սիրոյ արտայայտութիւնները, միւս կողմէ ալ, նոր սէրերու հունտերը կը նետուին հողին: Աչքեր իրար կը զննեն: Գաղտնագողի ժպիտներ, փսփսուքներ…: Մէկ կողմէ միաժամանակ կը ճաշեն, «պաղինձ»ի մէջ եփած «ջղինդի»ն կ'ուտեն: Քարիւղի լամբի լոյսին տակ կ'աշխատին մինչեւ ուշ գիշեր: Երբ գործը կ'աւարտի եւ եթէ «լուսնիքա էրանդ գիշեր» (լուսնեակ պայծառ գիշեր) է, կը կազմուի ձեռք-ձեռքի մեծ շուրջպարը, գործին աւարտելու ուրախութեամբ եւ «թոչինք-թոչինք/ որո՞ւ ինչ/ սիրողներուն կենացը/ հէ-հէէէ՜յ» հրահանգով:

# Ընդունելի լինի, Տէ՛ր

**ՍԻՐԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ**

Մատաղին նախորդող օրը այնքան բազմազբաղ ու սրընթաց էր, որ վաղուայ արարողութեան մասին անգամ մոռացայ: Միայն օրուայ վերջում, երբ արդէն փաթեթաւորում էինք մսով լցուած փոքրիկ բոքոնները, իմ մէջ արթնացաւ վաղը՝ իր ողջ իմաստով: Ու գիտէ՞ք, թէ ինչը ինձ այդպէս կապեց վաղուայ հետ, աւելի ճիշդ՝ ովքեր: Այն փոքրիկ աղջիկները, որոնք մայրիկների ու մօրաքոյրների յոգնած խմբին միացան երեկոյեան կողմ: Հէնան ու Հալլէտը, Մէրալը եւ Իլտան: Այդ փոքրիկ աղջիկների մատիկներով փաթաթուած մատաղացուն ինձ մի շատ կարեւոր բան յուշեց. վաղը, քանի տասնեակ տարիներ յետոյ եւս, Սուրբ Գէորգին նուիրուած այս ողջ արարողութիւնը ճիշդ նոյն կերպ պիտի կրկնուի: Չպէտք է մոռացուած լինի եւ ոչ մի մանրամասն:

Սամաթիայի լեփ-լեցուն եկեղեցին ամէն տարուայ նման առաջինն է ընդառաջ գնում մատաղի սուրբ արարողութեանը:

Երգչախմբի մե՛րթ հուժկու, մե՛րթ էլ նուրբ երգեցողութիւնը լրացնում ու ներդաշնակում է մեր հոգու ալեկոծումներին: Եկեղեցու գաւիթում շնչառութեան ձայն անգամ չի լսւում: Ու ինչքա՜ն մեծ խորհուրդ կայ իրար փոխանցուող ողջագուրման մէջ: Մենք մի ենք դառնում՝ Սրբազանից մինչեւ վերջին երախան:

Ինձ թւաց, թէ ամէն ոք իր աշխարհում է, հոգիները այլ տեղ են:

Որովհետեւ ես 50 տարով յետ էի գնացել:

Դէպի Լոռուայ Կուրթան գիւղի եկեղեցին էին շարժւում ուխտաւորների շարքերը: Սուրբ Սարգիս եկեղեցին:

Իսկ ողջ նախորդ օրը բոլորը եռուզեռի մէջ էին:

Հօրեղբայրներիս կանայք ու մայրս ծանր, երկաթէ արդուկով հարթեցնում են իրենց ամենալաւ զգեստներն ու գոյնզգոյն գլխաշորերը: Մեր՝ փոքրկներիս մասին հոգում են մեր մեծ քոյրերը:

– Թերեզ՛, արդուկը.- ձայնում է մայրս:

Թերեզ քոյրս մա՛նր- մա՛նր ուլունքները ասեղով շարում է թելի վրայ: Նաւեր է թռչում ու արդուկը առած դուրս գալիս: Ես փէշի ետեւից վազում եմ: Քոյրս «քամուն է տալիս» ծանր արդուկը, որի մէջ պեծպեծին է տալիս կրակի շեղջը:

Քամին բորբոքում է կրակը, բայց քոյրս երեւի գոհ չէ, որ բացում է խուփը ու սկսում փչել: Ես էլ եմ գլուխս կոխում արդուկի մէջ:

– Մազերդ խանձեցիր, հեռու կա՛ց,- ծղրտում է քոյրս:

Յետոյ շարունակում է արդուկուել շորերը, մինչեւ մօրս կրկին ձայնելը:

Հայրս սպիտակ բրդով, թմբլիկ դմակով ղոչի եղջիւրներին կապել է կարմիր ժապաւէնները, վզին զնգզնգում է փոքրիկ զանգակը, քոյրերս թխել-վերջացրել են թուջէ կաղապարի մէջ գառնուկները ու վզին կապել դարձեալ կարմիր ժապաւէն: Ինձ թւում է՝ կենդանի են, որովհետեւ նորածին գառան չափ են:

Օրն այնքան բազմազբաղ է ու յագեցած, որ ոչ ոք շունչ քաշելու ժամանակ չունի: Իսկ մեր՝ փոքրիկներիս շունչը կտրուել է վազվզոցից:

Երեկոյեան կողովների մէջ դարսւում են մրգերը, փարչերի մէջ լցւում սառը թանը: Մայրս թխել է աշխարհի ամենահամեղ հացը ու նաեւ կաթնահունց նազուկ, որի երեսը ձուի ու մածնի խառնուրդից շառագունել է փռան մէջ:

Գիշերը ես ու Սուսան քոյրս գրեթէ չքնեցինք: Երեւակայութիւններս վառւում էր վաղուայ սպասելիքներից: Տասը անգամ գաղտնի հագանք ու հանեցինք սիրուն շորներս, որ զարդարուած էին ուլունքներով ու ժապաւէններով:

Չգիտեմ՝ դրանից առաջ նման մի ուխտագնացութիւն եղել էր, թէ չէ: Դրանից յետոյ շատ տեղեր ուխտի գնացինք, բայց սրա նման երկրորդը չկրկնուեց:

Եթէ մօտաւորապէս 50 տարի առաջ էր, դա պէտք է զուգադիպէր Սթալինեան բռնապետութեան կործանմանը: Արդեօ՞ք ժողովուրդը իր ճզմուած, արիւնաքամ ազատութիւնն էր գնում Սուրբ Սարգսի Տօնի հետ խառնելու ազատութիւն, որ 40 միլիոն զոհերի գնով էր ձեռք բերել: Ու նաեւ գնում էր իր կորած աւանդութիւնները գտնելու-վերադարձնելու: Հաւանաբար այդպէս է եղել:

Աղջամուղջի մէջ երկար թափքով մեքենան ցնցւում է ձորն ի վար տանող ճանապարհների ոլորաններում ու անվերջանալի դարու փոսերում: Ամէն մի կտրուկ ցնցումից իրար վրայ ենք թափւում, ու քրքիջը հասնում է մինչեւ ձորի այն կողմում գտնուող Ջորագեղ: Մեզնից առաջ ու յետ գնում են սայլերը, ձիերը, աւանակները՝ բեռներն ու մանուկներին շալակներն առած:

Լոյսը նոր էր բացւում, իսկ մենք արդէն Կուրթան գիւղում ենք: Սարի լանջի դէպի մեր գիւղը ձգուող տափարակը այնքան ծաղկառատ է, որ աչքերս շաղւում են գոյներից ու երանգներից: Այս քքուշ ու անկրկնելի կապոյտ համբարձումները, կաթնասպիտակ սըմբուլը, մեծ, հսկայական հովանոցով սապնածաղիկը ու հազար երանգի ծաղկած վայրի մեխակները: Ցիրաւի, այդ դաշտը իմ մանկութիւնը այնպէս է օծել իր ներկապնակով, որ ինձ թւում է, թէ հիմա էլ աշխարհին նայելիս այնտեղից եմ փոխ առնում երանգների ծիծաղն ու խայտաբղէտութիւնը: Իմ բառերն էլ՝ այդ ծաղիկների միջից են ծնւում ասես:

Հասնում ենք բարձունքի կատարը: Ծարունաշար, մատաղացու գառնուկները առած երեք անգամ պտտւում ենք եկեղեցու շուրջը ու շարանը զիջում միւս խմբին:

Ու սկսւում է ասես նախապէս պատրաստած բեմադրութիւնը:

Մի տեղ կողերը ցեխով պատած կաթսայի մէջ խլթխլթում է միսը: Մի տեղ մարդիկ շրջապատել են ընկնաւոր մի տղայի, որին հրաշք աղօթքով բուժում է մի տարիքոտ տղամարդ:

Մի տեղ մեր 50 հոգանոց գերդաստանը, պարանի ծայրին շարուած, փորձում է յաղթել Մելիքբէթեան տոհմին ու յաղթում է: Մի տեղ տղաներն ու աղջիկները «աղջիկ փախցնողի» են խաղում: Մի տեղ դիզուել են գոգ-գոգ սարի ծաղիկները ու պսակ են դառնում: Մի տեղ զուռնի հնչիւնների տակ փոթորկւում է պարը:

Մի տեղ…

Կուրթանի եկեղեցին երեւի այդպիսի մի ուխտ տեսած չկար:

Մայրս, մինչ սփռոցին կը դնի սարի ուրցով եփուած միսը, առանձնացնում է գիւղում բաժանելիքը:

Յետոյ երբ տուն հասնենք, անմիջապէս պիտի բաժանի եօթ մասի ու մեր ձեռքով ուղարկի հարեւաններին, գերադասելի է՝ ծերերին ու աղքատներին:

Մատաղացու մսի վրայով գիշեր չպիտի անցնի, որ «արթոց լինի»՝ ընդունուի:

Ու նաեւ օղի չպիտի խառնուի նրան, ոչ էլ գինի: Իսկ բաժանելուց անմիջապէս յետոյ մեզ պիտի վերադարձնեն ամանները՝ անլուայ, մէջը մի քիչ աղ լցրած:

Անգամ փոքրիկ աքաղաղը «տապլա» անելիս եօթ մասի է բաժանւում: Ու դարձեալ ասում են՝ արթոց ըլի:

Ու Կուրթանի եկեղեցու շուրջը այստեղ-այնտեղ նստոտած խմբերը հեռուից, մօտիկից միմեանց ձայնում են՝ արթոց ըլի, արթոց ըլի:

Այնքան սովորական եմ ընդունել այդ բառը, իմաստ էլ կարծես հասկացել, որ պէտք է նշանակի՝ ընդունելի լինի, որ չեմ էլ հետաքրքրուել բառի իսկական իմաստով:

Հիմա խելքս տեղն եկաւ, բայց Աճառեանի «Արմատական Բառարան»ը ինձնից 200 հազար քիլոմեթր հեռու է: Հետս ինչ բերել եմ, այս է՝ ես ու ես ու իմ լեզու առած յիշողութիւնները:

Երբ զանգերի երկար զնգոցների տակ եկեղեցին սկսեց դատարկուել, ես զգացի, որ ղօղանջները Կուրթանի եկեղեցուց չեն գալիս, որ երգերը այնտեղ չեն երգւում, որ խունկ այնտեղ չի խնկւում:

Ես Սամաթիայի Սուրբ Գէորգ եկեղեցում եմ, ու ինձ շրջապատում են ոչ թէ ղաչաղանցիներն ու մեր շրջակայ գիւղերի ուխտաւորները, այլ պոլսահայերը:

Ես հպարտացայ մի շատ կարեւոր բանի համար. ամէն տեղ այնքա՜ն նոյնն ենք մնացել:

Մենք գալիս ենք 301 թուականից, ու մեր տարանջատումից չի խամրել դարերի յիշողութիւնը: Ես եւ այն փոքրիկ աղջիկները՝ Հէնան, Մէրալը, երկուորեակներ՝ Սասունն ու Թամարը նոյն յուզմունքով ու սպասելիքներով ենք ընդառաջ գնում մեր եկեղեցական ու ժողովրդական սրբազան արարողութիւններին:

Մենք նոյնն ենք, որտեղ էլ լինենք:

Նայում եմ այս ուխտաւորների շարքերին ու զգում, որ նրանք այնպէս են ձուլուել իրենց յիշողութիւններին ու սուրբ պատարագին, որ դարերն անգամ մէկը միւսից պոկել-առանձնացնել չեն կարող:

Ու երեւի ամէն, մէկը ե՛ւ այնտեղ էր, ե՛ւ իր հայրենի լեռներում, սարերում, գիւղերում, մանկութեան եկեղեցում:

Լոռում, Սասունում, Երզնկայում, Բաղեշում…

Ու իմ նախնիների բարբառով շշնջում եմ.

– Արթոց ըլի:

– Ընդունելի լինի, Տէ՛ր, երեւի շշնջում են բոլորը,- ընդունելի լինի:

siran_hovhannisyan@hotmail.com



մէրիաբարեւ

ԻՍԹԱՆՊՈՒԼ ԵՐԵՒԱՆ

© RUBEN MANGASARYAN • PATKER PHOTO



«Էյուպ Մզկիթ»ին մէջ կանայք կ'ընթանան իրենց համար առանձնացուած աղօթավայրը:
Eyüp Camisi'nin kadınlar, kendilerine ayrılan namaz yerine gidiyorlar